18.qxd 13/09/2026 15:07 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 10 սեպտեմբերի 2026թ. թիվ 18(646)

ԵՐԲ ԳԱԼԻՍ Է ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներում, Գավառի պետական համալսարանում ու Սեւանի, Մարտունու, Գավառի եւ Վարդենիսի պետական քոլեջներում Առաջին զանգի ղողանջների ներքո տրվեց Նոր ուսումնական տարվա մեկնարկը:

Մի քանի տասնյակ դպրոցներում արդեն դասերը սկսվում են ժամանակակից բոլոր պայմաններով հագեցած միջավայրում, իսկ մի շարք դպրոցներում էլ մանկավարժներն ու աշակերտները նույն խանդավառությունը կունենան առաջիկա ամիսների ընթացքում:

Այո, ուրախությամբ պետք է արձանագրել, որ ոչ միայն կրթվելու համար ստեղծվում են ամենալավագույն պայմանները, այլ նաեւ բարեփոխումների միջոցով բարձրանում է կրթության որակը եւ մանկավարժների աշխատավարձերը:

Ավելորդ չէ նշել, որ կրթությունն է մնում այն միակ հիմնաքարը, որի վրա կբարձրանա զարգացած ու հզորացած Հայաստանի Հանրապետությունը՝ համայն հայության միակ ու անկրկնելի հայրենքը:

Այսօրվա խաղաղ երկինքը, հիմնովին նորացված ու շքեղ դպրոցական շենքերը, կրթական առանձին հաստատություններում տիրող շինարարական եռուզեռը, բարձր տրամադրությամբ դպրոց շտապող ուսուցիչներն ու աշակերտները հուսադրում են բոլորիս ու հավաստում, որ հայ ժողովրդի ու հայրենիքի պայծառ օրերն ու ժամանակները դեռ առջեւում են:

Բարի ե՛րթ, շնորհավո՛ր Նոր ուսումնական տարի:

«Գեղամա աշխարհ»

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ աշակերտներ, ուսանողներ, մանկավարժներ, ծնողներ եւ կրթության ոլորտի նվիրյալներ, սրտանց շնորհավորում եմ ձեզ Սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի եւ դպրության օրվա, ինչպես նաեւ Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Սեպտեմբերի 1-ը յուրաքանչյուրիս համար առանձնահատուկ խորհուրդ ունի: Այն նոր ճանապարհի, նոր նպատակների, գիտելիքի ու բացահայտումների սկիզբ է: Առանձնահատուկ ջերմությամբ շնորհավորում եմ մեր առաջին դասարանցիներին, ովքեր այսօր առաջին անգամ ոտք են դնում դպրոց՝ սկսելով իրենց կյանքի կարեւոր ու հիշարժան փուլերից մեկը:

Սիրելի՛ աշակերտներ եւ ուսանողներ, կրթությունը ոչ միայն գիտելիք ձեռք բերելու, այլեւ մտածելու, ստեղծագործելու, սեփական ուժերին հավատալու եւ ապագան կերտելու հնարավորություն է: Մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին ձեզ համար լինի արդյունավետ, հետաքրքիր, նոր ձեռքբերումներով ու հաջողություններով լի: Թող ձեր ստացած գիտելիքները դառնան ամուր հիմք՝ ձեր երազանքներն իրականացնելու եւ մեր հայրենիքի զարգացման գործում ձեր ներդրումն ունենալու համար:

Հարգելի՛ մանկավարժներ, ձեր առաքելությունը չափազանց կարեւոր եւ պատասխանատու է: Ձեր ամենօրյա նվիրումով, համբերությամբ ու մասնագիտական աշխատանքով կրթում եւ դաստիարակում եք մեր վաղվա օրը կերտող սերունդներին: Շնորհակալ եմ ձեզ՝ ձեր անգնահատելի աշխատանքի եւ յուրաքանչյուր աշակերտի հաջողության մեջ ունեցած մեծ ավանդի համար:

Շնորհավորում եմ նաեւ ծնողներին, ովքեր մշտապես իրենց երեխաների կողքին են՝ աջակցելով նրանց կրթության ճանապարհին:

Թող 2026-2027 ուսումնական տարին լինի խաղաղ, բարեկեցիկ եւ արգասաբեր: Թող այն նշանավորվի նոր գիտելիքներով, բարձր առաջադիմությամբ, կարեւոր ձեռքբերումներով եւ իրականացած նպատակներով:

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԸ՝ ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎՐՈՊԱ ԼԻԳԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

«Արարատ-Արմենիա» ֆուտբոլային ակումբը, պատասխան խաղում մրցելով ռումինական «Ունիվերսիտատեա Կրայովա» ակումբի հետ, բացառիկ արդյունք գրանցեց Հայաստանի ֆուտբոլի պատմության մեջ՝ նվաճելով Եվրոպա լիգայի խմբային փուլի ուղեգիր:

«Արարատ-Արմենիան» դարձավ Հայաստանի առաջին ակումբը, որ նման հեղինակավոր մրցաշարի է մասնակցելու:

Առաջին հանդիպումը կայացել էր Ռումինիայում, որտեղ մեր թիմը կարողացավ ոչ-ոքի արդյունք գրանցել:

Օգոստոսի 27-ին Երեւանում հանդիպումը եւս դժվար ստացվեց, ու մինչ խաղավերջ լուսատախտակին վառվում էր 0:0 հաշիվը: Ու երբ թվում էր, թե խաղը կտեղափոխվի լրացուցիչ ժամանակ, մեր թիմի հարձակվողին կոպիտ խախտումով կանգնեցնելու համար նշանակվեց 11 մետրանոց տուգանային հարված:

Գնդակին մոտեցած Սանդրո Լիման առաջին փորձից վրիպեց, բայց մրցավարը կրկնել տվեց հարվածը, քանի որ մրցակցի խաղացողները շուտ էին ներխուժել տուգանային հրապարակ:

Երկրորդ անգամ էլ ռումինացի դարպասապահը հետ մղեց հարվածը, բայց վրա հասած Լիման միայն երրորդ փորձից կարողացավ հասնել հաջողության:

Շնորհավորում ենք մեր թիմին, բոլոր երկրպագուներին, համայն հայությանը՝ այս պատմական հաղթանակի առթիվ:

Հուսանք, որ «Արարատ-Արմենիան» նոր հաղթանակներով մեզ կուրախացնի Եվրոպա լիգայի միջազգային մրցաշարում:

Մեր թիմը միջազգային մրցասպարեզում կանցկացնի 8 հանդիպում՝ մրցելով իտալական «Միլանի», սլովենական «Ցելիեի», չեխական «Սպարտայի», ավստրիական «Զալցբուրգի», նիդեռլանդական «ԱԶ Ալկմարի» ու «ՆԷՑ»-ի, լեհական «Յագելոնիայի» ու պորտուգալական «Տորրենսեն» թիմերի հետ:

Հաջողություններ ենք մաղթում մեր առաջին ծիծեռնակին՝ «Արարատ-Արմենիա» թիմին:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՈՑԻ ՋՐՎԵԺԸ



Արագած լեռան գողտրիկ ու գեղատեսիլ անկյուններից մեկն էլ Գեղարոտի ջրվեժն է, որը շրջապատված է բարձրաբերձ լեռնակատարներով ու ողորկ, ուղղահայաց ժայռաշղթաներով: Այստեղ բնությունը փայլատակում է ծաղիկների ու քարերի բազմաթիվ երանգներով, ձյան ճերմակ շերտով, որոտում ջրի հզոր գոչյունով, համերգում գետի շառաչով, քամիների սոսափյունով կամ պոռթկումներով: Հազար անգամ էլ որ ընթերցես Գեղարոտի ջրվեժի շռայլությունների մասին, միեւնույն է, այն տպավորությունը չես կարող ստանալ, ինչ որ ստանում ես քո կյանքում գոնե մեկ անգամ այն սեփական աչքերով տեսնելուց:

Գեղարոտի ջրվեժ մեկնում ենք «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանի հետ:

Գավառից հասնում ենք մայրաքաղաք ու Աշտարակ՝ մեր կազմը համալրելու մարդկանցով, ովքեր ցանկացել են միանալ մեր օրվա երթին: Դուրս ենք գալիս Արագածոտնի մարզի Արագած գյուղից ու ուղղություն վերցնում դեպի Գեղարոտի ջրվեժ, որը գտնվում է այդ բնակավայրից 12 կիլոմետր արեւմուտք:

Դեռ հեռվից երեւում են Արագածի արեւելյան կողմի երկու գագաթները, որոնց լանջերին սպիտակին են տալիս ձյան առատ շերտերը: Մենք առաջ ենք շարժվում նույն Գեղարոտի ձորի միջով, որտեղով էլ հոսում է ջրվեժից թափվող համանուն գետը: Ալպիական փարթամ բուսականությունը դեռ սքանչելի ու վառ ծաղկունքի մեջ է: Մեր աչքերի դեմ փռված են սրոհունդի, խռնդատի, ուրցի, սուսամբարի, ճարճատուկի, դաղձի, այլ բույսերի ծաղկաբույլերը: Առավել տարածված են «իվանչայի» կամ կիպրեայի ծաղկաբույլերը, որոնք եւ՛ խիտ են , եւ՛ բարձրահասակ՝ իրենց կապտագույն երանգներով գրավելով մեր ուշադրությունը: Այս բույսի թեյատու հատկությունների մասին տեղեկությունը հաղորդում է մեր խմբին միացած Աննա Համազասպյանը, ով վարում է «Սիրուն Հայաստանս» ֆեյսբուկյան էջը՝ ներկայացնելով Հայաստանի բնության ու բնապատմական հուշարձանների հրապույրներն ու շռայլությունները:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

18.qxd 13/09/2026 15:07 Page 2

ՆՈՐԱՏՈՒՍՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցում անցկացվել է նոր ուսումնական տարվան նվիրված ընդլայնված խորհրդակցություն, որին մասնակցել են Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների տնօրեններ ու վարչատնտեսական մասի համակարգողներ, ինչպես նաեւ նախադպրոցական եւ արտադպրոցական հաստատությունների ղեկավարներ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, խորհրդակցությունը վարել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Խորհրդակցությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, «ԿԶՆԱԿ» հիմնադրամի տնօրեն Ժաննա Հարությունյանը, ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, մարզպետի աշխատակազմի կրթության ոլորտի պատասխանատուներ:

Մինչ խորհրդակցության մեկնարկը տեղի է ունեցել կրթական էքսպո, որի ընթացքում մասնակիցները ծանոթացել են հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում մշակված «Ամենահետաքրքիր խմբակ», «Ամենահետաքրքիր նախագծային աշխատանք», «Նորարարական դասի լավագույն գաղափար», «Աշակերտական խորհրդի լավագույն նախաձեռնություն», «Արժեքային կրթության ուղղված լավագույն փորձ» ուղղություններով դպրոցականների կողմից պատրաստած նորարարական նախագծերին: Դրանք ներկայացրել են Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ, Գավառի թիվ 3 եւ թիվ 5 հիմնական, Նորատուսի թիվ 1 միջնակարգ, Սեւանի թիվ 1 հիմնական, Մարտունու Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմնական, Լիճքի միջնակարգ, Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ, Վարդենիսի թիվ 3 հիմնական եւ Դպրաբակի միջնակարգ դպրոցները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը նախարարության շնորհակալագրերով խրախուսել է ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից «Տարվա լավագույնները.2025-2026» մրցույթի արդյունքում ընտրված եւ հաղթող ճանաչված տնօրեններին եւ ուսուցիչներին:

Արաքսիա Սվաջյանը խոսել է նոր ուսումնական տարվան ընդառաջ կազմակերպվող աշխատանքների մասին, որոնք հիմնականում բխում են կրթական նոր չափորոշիչների պահանջներից, մանրամասնել ուսումնական տարվա ընթացքում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը վերաբերող թեմաները, անդրադարձ կատարել նախորդ ուսումնական տարվա ընթացքում գրանցված առաջընթացին եւ ձեռքբերումներին, նախադպրոցական եւ արտադպրոցական ուսումնական հաստատություններում ներդրվող բարեփոխումներին,«300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի ընթացքին, ուշադրության առնվող տարաբնույթ թեմաների:

Արաքսիա Սվաջյանը պատասխանել է նաեւ հանդիպման մասնակիցների կողմից բարձրացված հարցերին:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Զոհված ազատամարտիկներ փողոցի հիմնանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է այս տարվա հուլիսից, ՀՀ Կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 111 միլիոն 186 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Զոհված ազատամարտիկներ փողոցի հիմնանորոգում՝ 1200 գծամետր երկարությամբ եւ 2050 քառակուսի մետր մակերեսով:

Փողոցի շինարարությունն իրականացվում է ճանապարհաշինական համապատասխան չափորոշիչներով. ճանապարհի նախկին հիմքի քանդումից հետո կատարվել է ավազակոպճային նախաշերտի, խճային հիմքի տեղադրում, բիտումի տարածում եւ ասֆալտապատում: Անհրաժեշտ հատվածներում տեղադրվել են նաեւ մետաղե ճաղավանդակներ եւ բետոնե ջրատարներ: Նախատեսվում է նաեւ փողոցի գծանշում եւ կահավորում:

Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Զոհված ազատամարտիկներ փողոցի տարեց բնակիչներն անգամ այս փողոցում հիմնանորոգման աշխատանքների իրականացում չեն հիշում: Բայց վերջին մի քանի օրերին այստեղ շինարարական եռուզեռ է: Շուրջ 1200 մետր երկարության փողոցի հիմնանորոգումը շուտով կավարտվի:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԵՎ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում այս օրերին շարունակվում է անասնակերի եւ հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2026 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի տնտեսություններում արդեն կուտակվել է 107 հազար 581 տոննա խոտ եւ 8050 տոննա ծղոտ: Վարդենիս համայնքում կուտակվել է 32 հազար տոննա խոտ եւ 8050 տոննա ծղոտ, Ճամբարակ համայնքում՝ 6500 տոննա խոտ եւ 25 տոննա ծղոտ, Մարտունի համայնքում՝ 35 հազար 580 տոննա խոտ եւ 1925 տոննա ծղոտ, Գավառ համայնքում՝ 20 հազար տոննա խոտ եւ 4200 տոննա ծղոտ: Սեւան համայնքում կուտակվել է 13500 տոննա խոտ:

Մարզի տնտեսություններում աշնանացան ցորենի 14 հազար 770,5 հեկտար արտերից բերքահավաքն առայժմ կատարվել է 4371 հեկտարի վրա, որի արդյունքում հավաքվել է 13106 տոննա ցորենի համախառն բերք: Միջին բերքատվությունը կազմել է 30 ցենտներ: Գարնանացան ցորենի 596,7 հեկտար արտերից արդեն հնձվել է 544,4 հեկտարը, ինչի արդյունքում հավաքվել է 1150,8 տոննա բերք: Մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 21,1 ցենտներ:

Գարնանացան գարու 9100,3 հեկտար արտերից արդեն հնձվել է 4876 հեկտարը, որի արդյունքում հավաքվել է 12346 տոննա բերք: Մեկ հեկտարի միջին բերքատվությունը կազմել է 25,5 ցենտներ:

-Թե՛ անասնակերի, թե՛ հացահատիկի բերքահավաքը որոշակիորեն ուշանում է օգոստոսի ընթացքում ու սեպտեմբերի սկզբին տեղացած հորդառատ անձրեւների պատճառով, այլապես այժմ շատ ավելի տեսանելի արդյունքներ կունենայինք: Լավ բերքի ակնկալիք ունենք հատկապես աշնանացան ցորենի արտերից: Բերքահավաքը կշարունակվի մինչեւ սեպտեմբեր ամսի վերջերը,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից:

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքների մեկնարկը տրվել է 2026 թվականի հուլիսից՝ պետական բյուջեի միջոցներով և «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Մարտունու Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 440 միլիոն դրամ: Ծրագրով նախատեսված է տանիքի, հատակի, սանհանգույցների, էներգամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման համակարգերի վերանորոգում, նոր դռների տեղադրում, բացօթյա մարզահրապարակի կառուցում, այլ աշխատանքներ: 2026 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ իրականացվել է ընդհանուր աշխատանքների շուրջ 30-40 տոկոսը:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի դեկտեմբերին:

ԴՄԱՇԵՆԻ 4 ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Դմաշեն գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են 3-րդ, 6-րդ, 8-րդ եւ 9-րդ փողոցների հիմանորոգման աշխատանքները:

Դմաշենի 4 փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 98 միլիոն 400 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու է 7700 քառակուսի մետր տարածքի ասֆալտապատում: Նախատեսված է մայթերի սալիկապատում, եզրաքարերի եւ վաքերի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի օգոստոսից եւ կավարտվեն հոկտեմբերի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում Դմաշենի 4 փողոց կդառնան ասֆալտապատ ու բարեկարգ:

Արմինե Ղուկասյան

18.qxd 13/09/2026 15:07 Page 3

ՍՈԹՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ Է ՀԱՆՁՆՎԵԼ ՈՌՈԳՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք գյուղում տեղի է ունեցել ոռոգման նորակառույց համակարգի բացման արարողությունը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, արարողությանը մասնակցել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակի ղեկավար Լեյլա Մելիումը, ՀՀ ՏԿԵՆ, ՏԿԵՆ ՋԿ եւ ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ եւ հյուրեր:

Ծրագիրն իրականացվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, «Հայկը՝ մեր հերոսների համար» ամերիկյան հասարակական կազմակերպության եւ Վարդենիս համայնքի եռակողմ աջակցությամբ: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 20 միլիոն 400 հազար դրամ, որի իրականացման արդյունքում կառուցվել է 6,2 կմ երկարության ոռոգման ջրագիծ եւ 4 400 խմ տարողությամբ ջրամբար:

Արդեն Սոթքում շուրջ 160 հեկտար ցանքատարածություն ապահովված է անխափան ոռոգմամբ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ գյուղատնտեսության զարգացման, բերքատվության բարձրացման եւ Սոթքի տնտեսությունների ամրապնդման համար:

Ողջույնի խոսքով հանդես է եկել Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը, ով մասնավորապես նշել է, որ սահմանամերձ բնակավայրերում, որոնցից մեկը Սոթքն է, ապրող յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր երեխա իր ներկայությամբ ու իր աշխատանքով ամրացնում է մեր սահմանը, հետեւաբար, այս բնակավայրերի նկատմամբ ուշադրությունն ու հոգածությունը պետք է լինեն մշտական եւ հետեւողական:

-Իմ եւ Վարդենիս համայնքի անունից շնորհակալություն եմ հայտնում Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակին եւ ,Հայկը՝ մեր հերոսների համարե բարեգործական հասարակական կազմակերպությանը,- նշել է համայնքի ղեկավարը:

Միջոցառման ավարտին Աիարոն Խաչատրյանը պատվոգիր եւ շնորհակալագիր է հանձնել ծրագրի իրականացմանն իրենց ներդրումն ունեցած գործընկերներին՝ կարեւորելով նրանց կատարած աշխատանքը, համագործակցությունն ու աջակցությունը:

Առաջիկայում նմանատիպ ծրագիր կիրականացվի նաեւ Վարդենիս համայնքի Գեղամասար գյուղում:

Խոսրով Խլղաթյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԴՅԱՆ ՓՈՂՈՑԸ

ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ եւ պետական միջոցներով 2026 թվականի օգոստոսի երրորդ տասնօրյակից մեկնարկել եւ ընթանում են Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Սայադյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Գավառի Սայադյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 900 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է Սայադյան փողոցի ճանապարհի երթեւեկելի մասի հիմնանորոգում՝ ներքին ու արտաքին ջրահեռացման համակարգի կառուցմամբ, հին ասֆալտբետոնյա ծածկի հեռացմամբ, նոր խճային հիմքի ու երշերտ ասֆալտբետոնյա ծակի տեղադրմամբ, 2400 գծամետր երկարությամբ եւ 28096 քառակուսի մետր մակերսով: Կառուցվելու են նաեւ երկկողմանի սալիկապատ մայթեր՝ 4300 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվեն ճանապարհի կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի վերջին:

ՍԵՎԱՆ-ՎԱՐԴԵՆԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԾՈՎԱԶԱՐԴ-ԳԱՎԱՌ ՀԱՏՎԱԾԻՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2026 թվականի օգոստոսի 18-ից ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ սկսվել եւ ընթանում են Սեւան-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի Ծովազարդ-Գավառ հատվածի միջին նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 333 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է հարթեցնող շերտի ստեղծում եւ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրում՝ 5 սանտիմետր հաստությամբ, 7500 գծամետր երկարությամբ, 58920 քառակուսի մետր մակերեսով: Ծրագրի շրջանակներում կլրացվեն կողնակները, ճանապարհը կգծանշվի ու կկահավորվի անվտանգության տարրերով: Օգոստոսի վերջերի դրությամբ շինարարական աշխատանքներն ավարտվել են:

Խոսրով Խլղաթյան

ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԱՐԱՄԱՅԻՍ ԽԼՂԱԹՅԱՆԻ «ՀՈԳՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ 2» ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում՝ Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղում, բացվել է գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ Արամայիս Խլղաթյանի «Հոգու հայրենիք-2» գեղանկարչական անհատական ցուցահանդեսը:

-Ավելի քան կես դար ստեղծագործող Արամայիս Խլղաթյանն իր արվեստով ու նվիրումով անգնահատելի ավանդ է ունեցել Մարտունիում կերպարվեստի զարգացման գործում. նա հիմնադրել է տեղի գեղարվեստի դպրոցը՝ կրթելով շնորհաշատ սերունդներ, ինչպես նաեւ հեղինակել մի շարք քանդակագործական ու գեղանկարչական սիմպոզիումներ: Ցուցահանդեսին ներկայացված շուրջ 50 գեղանկարները մարդկանց ու սերունդներին փոխանցում են հայրենի բնաշխարհի, լեռների ու ձորերի առանձնահատուկ հմայքը,-բացման խոսքում նշել է ՀՀ պետական պատկերասրահի Մարտունու մասնաճյուղի տնօրեն Անահիտ Գեւորգյանը:

Ցուցահանդեսի բացմանը Մարտունու համայնքապետարանի, համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչների, արվեստասերների կողքին մասնակցել են նաեւ 2024 թվականին Մարտունիում կայացած գեղանկարչական սիմպոզիումի բոլոր 15 մասնակից նկարիչները:

Անահիտ Գեւորգյանի բացման խոսքից հետո ելույթ են ունեցել ՀՀ ժողովրդական նկարիչ Հրանտ Թադեւոսյանը (Վարպետ Թաթոս) եւ օրվա հերոսը՝ Արամայիս Խլղաթյանը:

Միջոցառման ընթացքում ազդարարվել է նաեւ Մարտունիում 10 գեղանկարիչների մասնակցությամբ եռօրյա պլեներային աշխատանքների մեկնարկը:

Մարտունու համայնքապետարանի ֆինանսավորմամբ իրականացվող նախագծի ավարտին հեղինակներն իրենց աշխատանքներից մեկական գործ նվիրել են համայնքին՝ համալրելով սիմպոզիումի արդյունքում արդեն իսկ ստեղծված 47 աշխատանքների հավաքածուն:

«Հոգու հայրենիք - 2» ցուցահանդեսը կգործի մինչեւ սեպտեմբերի 20-ը:

Գեղանկարիչ Արամայիս Խլղաթյանի տեղեկացմամբ՝ եռօրյա գեղանկարչական պլեներային աշխատանքներն արդեն ավարտված են, ու Մարտունի համայնքի բնաշխարհը պատկերող գեղանկարչական աշխատանքներն արդեն ներկայացվել են ցուցադրության:

Խոսրով Խլղաթյան

ՍՈՂԱՆՔԱՁԻՆ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՆՑԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ճամբարակ համայնքում ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 19-րդ եւ 51-րդ կիլոմետրերում գտնվող սողանքային տեղամասերում իրականացվել են ճանապարհամերձ հողաշերտի բեռնաթափման, ճանապարհի անցանելիության ապահովման միջոցառումներ:

Ինչպես տեղեկացրին ճանապարհաշինական աշխատանքներն իրականացնող «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ընկերությունից, շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է 2025 թվականի հոկտեմբերից, եւ 2026 թվականի օգոստոսի 19-ի դրությամբ դրանք արդեն գտնվում են ավարտական փուլում: Աշխատանքներն իրականացվել են Աղբերքի եւ Այգուտի տեղամասերում՝ 1247 գծամետր երկարությամբ եւ 7482 քառակուսի մետր մակերեսով: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 138 միլիոն դրամ, որն ամբողջովին հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Շինարարական աշխատանքների արդյունքում բեռնաթափվել է ճանապարհամերձ հողաշերտը, տեղադրվել են ջրահեռացման մետաղական խողովակներ, արգելափակոցներ, ավազակոպճային եւ կոպճային շերտեր, ֆրեզված ասֆալտի ծածկ:

-Ճամբարակով անցնող հանրապետական նշանակության ավտոճանապարհի Աղբերքի եւ Այգուտի տեղամասերում, 1247 գծամետր երկարությամբ, սողանքի հետեւանքով դժվարանցանելի վիճակ էր առաջացել տրանսպորտային երթեւեկության համար: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ արդեն սողանքային այդ տեղամասերում ապահովված է ճանապարհի անվտանգությունն ու անցանելիությունը,-ներկայացրին շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպությունից:

«Գեղամա աշխարհ»

18.qxd 13/09/2026 15:07 Page 4

«ՆԵՄԵՍԻՍ»-Ը՝ ՎՐԵԺ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գործը հավիտյան է, մեր ժողովուրդը՝ հավերժական»

Գուրգեն Մելիքյան



Մեր ժողովրդի արժանապատիվ զավակներից, «Նեմեսիս» գործողության հերոս անդամներից Արտաշես Գեւորգյանը ծնվել է Էրզրումի վիլայեթի Խոտորջուր գավառի Միջինթաղ գյուղում: 1916 թվականին Արտաշեսն իր եղբոր՝ Թորգոմ Գեւորգյանի (Ազվին) հետ, ով եղել է Զորավար Անդրանիկի համիարզը, մտնում է Անդրանիկի զորագունդը եւ ակտիվ մասնակցում 1916-1919 թվականների՝ զորավարի մղած բոլոր մարտերին: 1922 թվականի հուլիսի 21-ին, ժամը 22-ի սահմաններում Արտաշեսն իր ընկերներ Պետրոս Տեր-Պողոսյանի եւ Ստեփան Ծաղիկյանի հետ Թիֆլիսում սպանում է 1914-1916 թվականներին Հայոց Ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկին՝ Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ջեմալ փաշային: 1936 թվականին Արտաշեսը մեր ազգի բազում լավագույն զավակների պես եւս ձերբակալվում եւ 1937 թվականի օգոստոսի 14-ի լույս 15-ի գիշերը, ժամը 02-ին գնդակահարվում է Ջեմալ փաշային սպանելու եւ Բերիայի հանդեպ իբր մահափորձ կազմակերպելու մեղադրանքով: Ստալինի մահից հետո բոլոր բռնադատվածները, նաեւ Արտաշեսը, հետմահու արդարացվել են:

Սա է մեր պատմության ցավոտ էջերից մեկը, երբ օտարի ցուցումով հայ չեկիստներն սպանում էին ազգի լավագույն ներկայացուցիչներին: Սակայն Արտաշեսն ու իր ընկերները հավերժ հիշվելու են որպես Ազգային Արժանապատվության Մարտիկներ:

Ինչպես ասել է Թալեաթ փաշային ալահիի գիրկն ուղարկած Սողոմոն Թեհլիերյանը՝ «Ես մարդ եմ սպսնել, բայց մարդասպան չեմ», այնպես էլ «Նեմեսիս» ծրագրի բոլոր մասնակից մարտիկները մարդասպան չէին, վրիժառուներ էին:

Հայոց վրիժառուների մասին պատահական չէ Արմին Թեոֆիլ Վեգների հայտնի խոսքը. «Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը, միայն խորհրդանիշ է, հյուլե, ում մեջ կենտրոնացված է քամահրված ռասայի ցավը, եւ ով հուսահատ ինքնապաշտպանության մեջ իր վրեժն է լուծում»:

Օգոստոսի 14-ին՝ Արտաշես Գեւորգյանի գնդակահարման օրը, Երեւանում խորհրդանշվեց մշակութային միջոցառմամբ: Օղակածեւ այգում 2023 թվականի ապրիլի 25-ին բացված «Ազգային արժանապատվության ասպետներին» աղբյուր-հուշակոթողի մոտ Արտաշես Գեւորգյանի թոռան՝ Արմեն Գեւորգյանի նախաձեռնությամբ, հավաքվել էին հայ մտավորականներ՝ տարբեր ոլորտներից՝ նկարիչներ, դասախոսներ, գիտնվորականներ, լրագրողներ, պարարվեստի նվիրյալներ:

Սկզբում տեղի ունեցավ ծաղիկների խոնարհում հուշարձան-աղբյուրի մոտ: Ռազմական ռեժիսոր Սամվել Թադեւոսյանն անդրադարձավ օրվա խորհրդին:

Արմեն Գեւորգյանը ողջունեց ներկաներին, անդրադարձավ հերոս պապի կերպարին, ասելով.

-Այսօր մեր ընտանիքի համար շատ ծանր օր է, որովհետեւ 89 տարի առաջ այս օրը գնդակահարել են իմ պապ Արտաշես Գեւորգյանին: Մինչեւ այսօր մենք չունենք մեր հարազատի գերեզմանը: Բայց, քանի որ պապիս ու իր ընկերների գործն անմահ է ու հավերժացած, ուրեն օրը խորհրդանշական է:

Արմեն Գեւորգյանը նաեւ տեղեկացրեց, որ միջոցառմանը ներկա ճանաչված հայ մտավորական Վիգէն Լէվիէճեանը, ով Երեւան է ժամանել Երուսաղեմից: Իմանալով, որ «Նեմեսիսը՝ մշակույթում» նոր շարժում ենք սկսել, պարոն Լէվիէճեանը սիրով համաձայնվեց՝ համագործակցել մեզ հետ ու մշակութային մեծ գործ է արել՝ իր ստեղծագործած նկարն այս հուշակոթողի մոտ նա ևվիրում է Նեմեսիսի թանգարանին: Աշխարհի տարբեր վայրերից շատ հայ մտավորականներ են ցանկություն հայտնել՝ աջակցելու Նեմեսիսի թանգարանի հիմնման ծրագրին:

Միջոցառմանը ներկա էին Արմեն Գեւորգյանի մտավորական ընկերները Ս. Պետերբուրդից, Երուսաղեմից, Բեյրութից, ԱՄՆ-ից, Երեւանից, այլ վայրերից:

Իր խոսքում Վիգեն Լէվիէճեանը կարեւորեց «Նեմեսիս» գործողությունը որպես հայոց արժանապատվության երեւույթ:

Միջոցառմանը ներկա էր նաեւ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահ, «Բերդ» պարային համույթի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր բալետմայստեր Կարեն Գեւորգյանը, ով հանդես եկավ ելույթով.

-Ես՝ որպես ազգային պարի գաղափարը կրող, կարծում եմ՝ ցեղասպանները ոչ միայն կոտորել են մեր ժողովրդին, խլել են մեր հայրենիքը, նաեւ խլել են մեր մշակույթը: Եվ, քանի որ սա մեր մշակույթի նոր գաղափարի ծնունդ է, կարծում եմ՝ այսուհետ ավելի շատ մեր հայրենակիցներ պետք է համախմբվեն այս գաղափարի շուրջ,-ասաց Կարեն Գեւորգյանը:

Անդրադառնալով հայկական պարերի ստեղծմանը՝ նա նշեց, որ հայկական ռազմապարերը ստեղծվում էին դյուցազունների ռազմական գործողությունների ժամանակ, երբ դրանք հաղթական ավարտ էին ունենում: Եվ քանի որ «Նեմեսիս»-ի գաղափարակիցները հասել են իրենց հաղթական ավարտին, հետեւապես պետք է ստեղծվի նոր, ռազմական բնույթի պար, որը նոր ոգեշնչում կտա հայ սերունդներին:

Բեյրութից Երեւան եկած Վիգենն անդրադարձավ Լիսաբոնի գործողությանը՝ այն համարելով «Նեմեսիս»-ի շարունակություն: 1983 թվականի հուլիսի 27-ին Հայ հեղափոխական բանակի հինգ անդամներ՝ Վաչե Տաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահնիյանը, Արա Քրջլյանը եւ Սարգիս Աբրահամյանը, միջազգային հանրության ուշադրությունը Հայոց Ցեղասպանության վրա սեւեռելու համար մտան Լիսաբոնի թուրքական դեսպանատուն եւ հայտարարություն տարածելուց հետո՝ պայթեցրեցին իրենց:

Միջոցառմանը ներկա զինվորականներից Ջավեն Հունանյանը եւ Արգամ Գեւորգյանը ծառայել են Ջրականում, Մեղրիում: Նրանք եկել էին իրենց զինվորների հետ, ովքեր մասնակցել են 2016 եւ 2020 թվականների Արցախյան պատերազմներին:

Մեղրու գնդի նախկին հրամանատար Արգամ Գեւորգյանի հետ ծանոթ եմ Ջրականից. միասին եղել ենք մարտական դիրքերում, 2019 թվականի մայիսին: Հիշեցինք Ջրականի հերոս պաշտպաններին: ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հիմնադիր ու գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը կարեւորեց 2023 թվականին բացված հուշարձան-աղբյուրի դերը, որը համարվում է մեր ժողովրդի արժանապատվության խորհրդանիշն ու յուրահատուկ սրբատեղին: Նա շնորհակալություն հայտնեց կառուցման հովանավորներին՝ լոնդոնաբնակ Բագրատ Նազարյանին եւ Թոնի Կաիվեին, ով նույնպես ներկա էր միջոցառմանը:

Ռազմահայրենասիրական երգերի կատարմամբ հանդես եկավ երգիչ Գեւորգ Համբարյանը:

Զոհրաբ Ըռքոյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՎՈՒՄ Է ՄԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊՐԱՀԱ-ՎԻՆՈՐ ԱՅԳԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում ընթանում են Պրահա-Վինոր այգու հիմնանորոգման եւ բարեկարգման աշխատանքները:

Դրանք իրականացվում են Սեւան-Պրահա-Վինոր ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում, Սեւան քաղաքի 2-րդ եւ 3-րդ միկրոթաղամասերի միջնամասում գտնվող տարածքում, որը երկար տարիներ հարակից շենքերի բնակիչների կողմից վերածվել էր մեծ ու փոքր բանջարանոցների եւ աչքի էր զարնում իր անհրապույր տեսքով, իսկ այժմ արդեն աստիճանաբար ու հիմնովին բարեկարգ տեսք է առնում:

Համագործակցության գաղափարի հեղինակ, «Ատլանտիս Դեվոլոպմենթ» ընկերության նախագահ, սեւանցի Արամ Մարությանի եւ Սեւանի համայնքապետարանի համագործակցության արդյունքում Պրահա-Վինոր այգում, որը զբաղեցնում է շուրջ 4600 քմ տարածք, իրականացվել են բարեկարգման եւ կահավորման աշխատանքներ:

2019 թվականի աշնանը Պրահա-Վինոր քաղաքային շրջանի պատվիրակությունն այցելեց Սեւան, որի ընթացքում էլ տեղի է ունեցել այգու պաշտոնական բացման արարողությունը՝ մասնակցությամբ Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի եւ Չեխիայի Պրահա-Վինոր քաղաքային շրջանի փոխքաղաքապետ Ռոբերտ Ռիտինայի:

Տարիներ անց Պրահա-Վինոր այգում տեսանելի են այն խնդիրները, որոնց պատճառով հնարավոր չէր երեխաների հանգիստն ու ժամանցը կազմակերպել եւ տարածքն օգտագործել լիարժեք:

Այգու բարեկարգումը դիտարկելով առաջնահերթություն՝ Սեւան համայնքի ավագանին դեռեւս անցյալ տարի հաստատեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Պրահա-Վինոր այգու բարեկարգման 2026 թվականի բնապահպանական ծրագիրը:

Ծրագիրը կյանքի է կոչվում համայնքի եւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համագործակցության արդյունքում: Ծրագրի պայմանագրային արժեքը շուրջ 4 միլիոն 800 հազար դրամ է, որից Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից բնապահպանական վճարներից Սեւան համայնքին հատկացված մասհանումների գումարը կազմում է 4 միլիոն 100 հազար դրամ:

Սեւան համայնքի կողմից ոչ միայն համաֆինանսավորում է կատարվելու շինարարական աշխատանքների եւ այգու կահավորման իրականացմանը, այլ նաեւ տեղադրվելու են խաղամիջոցներ, որոնք լրացնելու են այգու ամբողջականությունը:

Այգում կատարվող շինարարական աշխատանքներին հաջորդելու է զրուցարանի, նստարանների տեղադրումը, տնկվելու են ծառեր, թփեր, ավելանալու է կանաչապատ տարածքը:

Արմինե Ղուկասյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքի բարեկամություն փողոցում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում օգոստոսի առաջին կեսից մեկնարկել եւ ընթանում են Բարեկամություն փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Բարեկամություն փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 194 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսված է շուրջ 900 գծամետր երկարության փողոցի ասֆալտապատում, մայթերի ու ջրահեռացման համակարգի կառուցում, եզրաքարերի տեղադրում: Ծրագրում ներառված են նաեւ Բարեկամության փողոցի 14-րդ նրբանցքը, Բարեկամության փողոցի շարունակություն հասնդիսացող Կաբելագործների 1-ին փողոցը եւ Զորավար Անդրանիկ փողոցի 4-րդ նրբանցքը: Այս հատվածներում շինարարությունը կմեկնարկի Բարեկամության փողոցի հիմնանորոգման աշխատանքների ավարտից հետո: Սեպտեմբերի սկզբի դրությամբ աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՕԳՈՍՏՈՍԻ ՎԵՐՋԻ ՀԱՄԵՄԱՏ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 18 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2026 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 70 սանտիմետր բարձրության վրա, ինչը 18 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա նույն օրը գրանցված նիշից:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ նույն օրվա դրությամբ Սեւանա լճից Հրազդանի հունով ոռոգման նպատակներով այս տարի բաց է թողնվել 64 միլիոն 79 հազար խորանարդ մետր ջուր՝ նախորդ տարվա օգոստոսի վերջի դրությամբ բաց թողնված 154 միլիոն 800 հազար խորանարդ մետրի փոխարեն: Արփա-Սեւան թունելային ջրատարով այս տարվա հունվարից մինչ օգոստոսի վերջին օրն ընկած ժամանակահատվածում Սեւանա լիճ է տեղափոխվել 172 միլիոն 387 հազար խորանարդ մետր ջուր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 101 միլիոն 800 հազար խորանարդ մետր ջրի դիմաց:

Այլ խոսքով՝ այս տարվա օգոստոսի 31-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ Սեւանա լճից ոռոգման նպատակներով պակաս է բաց թողնվել 90 միլիոն 721 հազար խորանարդ մետր ջուր:

Իսկ Արփա-Սեւան թունելային ջրատարով նախորդ տարվա համեմատ Սեւանա լիճ ավել է տեղափոխվել 70 միլիոն 587 հազար խորանարդ մետր ջուր:

«Գեղամա աշխարհ»

18.qxd 13/09/2026 15:07 Page 5

ԳԵՂԱՐՈՑԻ ՁՐՎԵԺԸ



/սկիզբը՝ էջ 1-ում/

Ճանապարհին անսպասելիորեն խափանվում է մեր մեքենայի աշխատանքը, եւ Թաթուլ Տոնոյանը, մեր խմբին միացած Հովիկը, Նորայրն ու Արմանը գործի են դնում իրենց իմացությունը՝ վերականգնելու այդ խափանումը: Ի դեպ, զարմանալիորեն, այսքան երթերի մեջ առաջին անգամ էր պատահում, որ Թաթուլի «Վայրենագնացը» խափանվեր, այն էլ սովորական ընթացքի պահին:

Աննա Համազասպյանն առաջարկում է մեր խմբի մյուս անդամին՝ Լուսինե Ղադիմյանին՝ բնության մեջ ազգային պար բռնելու, որը պետք է աղոթքի պես տեղ հասնի, ու Արարչի կամոք վերանա մեքենայի անսարքությունը:

Եվ բնության այս գողտրիկ անկյունում երկու շնորհալի, հայրենասեր ու բնասեր հայուհիները, ձեռք ձեռքի տված, երաժշտության ներքո քնդացնում են «Ապարանի գովնդը», իսկ մենք դարձել ենք այդ հոգեբուխ ներկայացման երջանիկ հանդիսատեսները:

Տող առ տող փորձում եմ վերհիշել Ավետիք Իսահակյանի «Ալագյազի մանիներ» պոեմը, որտեղ պարզապես կենդանի գույներով ու արարչական շնչով են ներկայացված Արագածի ողջ պերճանքն ու շռայլությունները:

«Ալագյազը՝ աստղերի մեջ՝
Ադամանդե թագը՝ գլխիվ՝
Սարերեն վեր, ամպերեն վեր,
Թիկն է տվել զմրուխտ-գահիճ:
Սինամ հավքի թեւեր ունիմ,
Թռնիմ, կերթամ Ալագյազ,
Ճակտիս աստղե պսակ ունիմ,
Վարդ ու բլբուլ, սեր ու սազ,-
Արի գիրկս, մարմար Ջարոս,
Թռնինք, երթանք Ալագյազ»:

Այս տողերը շատ հաճախ եմ սիրով արտաբերել, մտքիս մեջ պատկերացրել Արագածի հմայքները, սակայն չեմ պատկերացրել, որ մի գեղեցիկ օր էլ պետք է ճամփորդեմ Արագածի արեւելյան կողմում փռված Գեղարոտի ձորի միջով:

Նայում եմ Արագածի՝ մեր կողմից երեւացող գագաթներին, Գեղարոտի ձորի լանջերին, անսահմանորեն տարածվող ծաղիկունքին, լսում գետի շառաչյունն ու գլգլան աղբյուրների քչքչոցը ու ինքս էլ փորձում եմ օրը բնության մեջ գեղեցկացնել իմ շնորհով՝ արտասանելով Իսահակյանի պոեմի սքանչելի շարքը.

«Դու, Արագած, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:
Սեգ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս փերուզ,
Առուներդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս:
Աղբյուրներդ գիշեր ու զօր
Խոսքի բռնված իրար հետ,
Վտակներդ՝ գիլ ու գլոր
Աբրեշումե փեշերեդ:
Թիթեռներդ՝ հուր-հրեղեն
Թռչող, ճախրող ծաղիկներ.
Ջառ ու զարմանք երազներեն
Պոկված ծվեն-ծվիկներ:
Ծիրանավառ դուն թագուհի,
Բուրումնների դուն աղբյուր,
Ծաղիկներդ հազար գույնի,
Հազար անուն, հազար բույր»:

Մեր ոտքերի տակից փախչող սառնորակ աղբյուրների զորությունը զգում ենք այն ժամանակ, երբ հացի նստելիս ջրի մեջ ենք դնում մեզ հետ տարած խմիչքները: Ընդամենը հաշված րոպեների ընթացքում շոգ եղանակի ներքո տաքացած շշերը գրեթե սառույցի չափ սառնություն ու ախորժալի զովություն են պարգեւում մեզ:

Անհամբեր սպասում ենք մեքենայի աշխատանքի վերականգնմանը, քանի որ Թաթուլը որոշել է Գեղարոտի ջրվեժը տեսնելուց հետո մեզ քայլարշավի տանել դեպի Մանթաշի ջրվեժ ու հովիտ եւ Մոնթեի ջրվեժ: Իսկ ես մտքիս մեջ շշնջում եմ Իսահակյանի պոեմի այն տողերը, որոնք ծոնված են Մանթաշին.

«Է՜յ Մանթաշի երազ-հովիտ,
Դուն զմրուխտե օրորոց.
Ծաղիկներդ լուսափթիթ՝
Վրաս մետաքս-վառ ծածկոց:
Աղբյուրներդ՝ բյուրեղ զանգեր,
Հովերդ անուրջ կըբերեն,
Մոռացումի թովիչ երգեր,
Հովերդ անուշ կօրօրեն:
Հուր-հավքերդ՝ թեւերն արծաթ,
Կտուցները՝ լալ-մարջան,
Ինծ կըպատմեն ոսկի հեքիաթ
Աշխարհներեն դյութական:
Ալմաստ առուն՝ մոր պես անքուն՝
Նանիկ կասե, օր-օր, օր.
Անուշ նանիկ զառ մանկության,
Նանի՜, նանի՜ , օր-օր, օր...»:

Վերջապես, տեւական ջանքերից հետո, Թաթուլը գործարկում է իր «Վայրենագնացը», ու մենք խորանում ենք Գեղարոտի ձորի մեջ, որը վերջանում է ժայռեղեն բարձրաբերձ շրջագծով, որի կատարներից էլ միատեղվում ու հուժկու շառաչով թափվում է Գեղարոտի ջրվեժը:

Պապանձվել-մնացել ենք նման հրաշք գեղեցկությունից, կախարդական եզերքի գույներից ու աղմուկներից, մեր կյանքի այդ սքանչելի ակնթարթից: Թափվելով բարձունքից՝ Գեղարոտի ջրվեժը դառնում է շառաչուն գետ ու սրընթաց գնում դեպի ցած, դեպի իր մայր գետ Քասաղը: Օգոստոս ամսի սկիզբն է, սակայն դեռ Գեղարոտ գետը հորդ ու վարար է, պաղպաջուն ու փրփրադեզ:

Խմբով քայլում ենք դեպի ջրվեժ՝ ավելի մոտիկից զգալու նրա անմահական շունչը: Ջրվեժ ենք բարձրանում Գեղարոտ գետի հարավային ափից: Վերելքը շատ բարդ է, մեր աջ կողմում թեք անդունդ է, որը պիտի հաղթահարենք ամենայն զգուշությամբ:

Որքան մոտենում ենք Գեղարոտին, այն մեր դեմ պատկերվում է վարսերն արծակ հավերժահարսի պատկերով՝ մաքուր, անապական, սլացիկ, երգեցիկ, գեղանի:

Որքան մոտենում ենք ջրվեժի շառաչին, այնքան դժվարանում է շնչելը, քանզի երկնքից թափվող շոգն այստեղ ոչ միայն կոտրվում է, այլ վերածվում սառնաչունչ հովի ու ցողի եւ անարգել նստում մեր մազերին, այտերին, աչքերին, հագուստներին:

Իսկական Վարդավառի հանդեսի մեջ ենք, ու մեզ ցողող, ջրող ուժն ամենազոր բնությունն է, մշտագոչ ու մշտակարկաչ Արագածը: Բայց, որքան կարողանում ենք շարժվել առաջ, այնքան մեջս թարմություն ու կայտառություն եմ զգում, եռանդ ու վճռականություն: Ու այդ դժվարին երթի մեջ սկսում եմ ըմբռնել, որ Աստվածային այս լեռների գրկում ինձ ու օրվա ընկերներիս գրկում են Ջրի ոգիները, որոնց հայ մեծանուն բանաստեղծ Միսաք Մեծարենցը կոչել է «Ջրանույշ պայիկներ»: Տեսնես որտե՞ղ է արդյոք հայ գրականության կուռքերից մեկը, այդ հիվանդ ու հանճարեղ պատանին, ողջ խորությամբ ու հոգու թրթիռներով զգացել Ջրի ոգու կենարար, սիրառատ ուժը, որ այսպիսի տողեր է երկնել.

«Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծըփանուտ երազիս ափունքեն.
անձուկին բոցը զիս պաշարե՛ց. Ըսպասման հիվա՛նդն եմ.
հոգեսարս դողերով եւ հուրքով միշտ ցայգերն են հըղի.
գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին.
ու ցայգուն ալ կ'անցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլըցուն:
Դարձուցե՛ք նավակներս հողմավար, ջրանո՛ւյշ պայիկներ,
դարձուցե՛ք նավակներս դյութավար, իրիկվա՛ն հովիկներ...»:

Ջրանույշ այդ Պայիկների սիրագորով համբույրների մեջ, ոտից գլուխ թրջված, հուզմունքով նստում եմ նույնքան թաց կանաչների վրա՝ աղոթքով ու մրմունջով Մեծարենցյան անուրջներն առ Երկինք առաքելու:

Հետո Աննա Համազասպյանն իր պայուսակից դուրս է բերում Հայոց Եռագույնը, որը հպարտորեն ու միասին ծածանում ենք Արագածի արեւելյան կողմի սրբազան տարածության մեջ: Մեր ժպիտներն առավել քան պայծառանում են:

Վերադառնում ենք ձեռք ձեռքի տված, առավել զգուշորեն, երբեմն ընկնելով ու բարձրանալով, քանզի վայրէջքն ավելի վտանգավոր է վերելքից:

Մինչ կհասնենք գետափի հարթ տարածք, Թաթուլն ու Արմանն արդեն կրակ են վառել, հացի պատրաստություն են տեսնում: Արդեն քիչ-քիչ իրիկնանում է: Թաթուլը ափսոսանքով մեզ հայտնում է, որ դեպի Մոնթեի ջրվեժ ծրագրված քայլարշավը մեկ այլ անգամ կանենք, քանի որ մութը քիչ անց կընկնի, դրա համար մենք շատ քիչ ժամանակ ունենք:

Մեջս անզսպելի ցանկություն է առաջանում՝ հանվել ու պառկել Գեղարոտի սառնաշունչ, զրնգուն ջրերի մեջ: Երակներիս մեջ արյունը համարյա կանգ է առնում ջրի սառնությունից, բայց փորձում եմ ավելի երկար դիմանալ: Ու մկրտվում եմ հայրենի սրբազան ջրով, որ ինձ փոխանցվի նրա զորավոր, վարարուն ուժը, սիրառատ կամքը, Հայրենիքի արարչական ոգին:

Ինձ այնպես է թվում, որ իմ ծննդյան ակունքը բխում է հենց այստեղից ու հավերժական կանչով գնում է դեպի հեռավոր եթերներ:

Ջրից դուրս գալուց հետո, Հայրենիքի ոգու զգացողության տպավորությունների տակ, արտասանում եմ Դանիել Վարուժանի «Նավասարդյան» բանաստեղծությունը, որը ձայնագրում է Աննա Համազասպյանը եւ տեղադրում իր էջում:

Հետո Գեղարոտի ջրվեժ են գալիս այլ բնասեր ուխտավորներ՝ իրենց ընտանիքների հետ: Մեր թեթեւ ու համեստ հացկերույթը վերածվում է ազգահավաքի ու մտերմության անկրկնելի երեկոյի: Մի ընտանիք եկել է Ֆրանսիայի Հանրապետության Մարսել քաղաքից: Վարդանյան ամուսինները ծնվել ու մեծացել են Երեւանում, սակայն այժմ ապրում են օտարության մեջ, ու ժամանակ են գտել՝ հայրենիք այցելելու ու տեսարժան վայրերով հիանալու համար: Խոսքուզրույցը շատ ավելի կարոտալի երանգ ունի, մանավանդ, որ քիչ հետո հրաժեշտ ենք տալու իրար:

Տուն ենք վերադառնում այնժամ, երբ մութը լրիվ տիրում է Գեղարոտի ձորին: Վերադառնում ենք անմոռաց տպավորություններով ու այն ակնկալիքով, որ շատ անգամներ ենք դեռ գալու Հայոց պաշտամունքի լեռ ու օրրան համարվող Արագած՝ հմայվելու նրա գաղտնախորհուրդ հրաշքներով:

Գեղարոտի ջրվեժն առաջացել է Քասաղ գետի Գեղարոտ վտակի վրա: Բարձրությունը ծովի մակերեւույթից 3000 մետր է: Գեղարոտի ջրվեժի սառնորակ ջրերը գալիս են Արագած լեռան խառնարանից եւ գահավիժում 25 մետր բարձրությունից: Այն ընդգրկված է ՀՀ բնության ջրագրական հուշարձանների ցանկում:

Խոսրով Խլղաթյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՍՐՎԱԽՈՋՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԸ

Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեկնարկել եւ ընթանում են Սովխոզնիկների եւ Զարգարյան փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Սովխոզնիկների փողոցում ասֆալտապատումն արդեն ավարտվել է, ընթանում են մայթերի կառուցման աշխատանքներ: Զարգարյան փողոցում այժմ ընթանում են ասֆալտապատման աշխատանքներ, զուգահեռ նաեւ մայթեր են կառուցվում:

Նշված փողոցներում նաեւ ջրահեռացման համակարգ է կառուցվել:

Աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Նույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել նաեւ Արծրունի եղբայրներ 2-րդ նրբանցքը, Միքայելյան փողոցի 1-ին նրբանցքը, Սիրունյան փողոցը, Գրիգոր Լուսավորչի 1-ին փակուղին, Վաղարշակ Փոշոտյան փողոցը, Ազատության 1-ին նրբանցքը, Ազատության փողոցի 1-ին նրբանցքի 4-րդ շենքի բակը, Ազատության փողոցի 1-ին նրբանցքի 1-ին փակուղին եւ Բոշնաղյան փողոցի 1-ին նրբանցքը:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 600 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ԳԱԳԱՐԻՆՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ԳԱՅԻ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Գագարին բնակավայրում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Գայի փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Գագարինի Գայի փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 400 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Գայի փողոցի ասֆալտապատում՝ 10980 քառակուսի մետր տարածքով, մայթերի սալիկապատում, եզրաքարերի եւ վաքերի տեղադրում, ջրահեռացման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի օգոստոսից եւ կավարտվեն հոկտեմբերի ընթացքում:

Գայի փողոցի ասֆալտապատման աշխատանքների իրականացումը մեր համայնքի ճանապարհաշինական առաջնահերթությունների ցանկում էր, որի լուծմամբ բնակավայրը կունենա բարեկարգ եւ ներկայանալի եւս մեկ փողոց:

Արմինե Ղուկասյան

18.qxd 13/09/2026 15:07 Page 6

ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՆՇՎԵԼ Է ՍԱՐՈՒԽԱՆ ԳՅՈՒՂԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 60-ՐԴ ՏԱՐԻՆ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում հանիսավորությամբ նշվել է Լաուրա Մանուկյանի անվան թիվ 1 մանկապարտեզի հիմնադրման 60-րդ տարին: Մանկապարտեզի աշխատակազմը եւ սաները, ինչպես նաեւ այս մանկապարտեզ հաճախած շնորհալի անհատները գեղարվեստական կատարումներով հանդես են եկել հարազատ կրթօջախի հոբելյանին նվիրված միջոցառմանը:

Հանդիսությանը մասնակցել են Գավառի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, Սարուխանի վարչական ղեկավար Լյովա Աբրահամյանը, Սարուխանի հոգեւոր հովիվ Տեր Ներսես քահանա Սահակյանը, ծնունդով սարուխանցի, ՀՀ գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի ղեկավար, արձակագիր, Գավառի պատվավոր քաղաքացի Տիգրան Նիկողոսյանը, սարուխանցի արձակագիր Իլյիչ Նավասարդյանը, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի, Գավառ համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

Մանկապարտեզի տնօրեն Ելենա Մանուկյանը ներկայացրել է մանկապարտեզի անցած ուղին, շեշտելով, որ 2025 թվականի հունիսից վերաբացված մանկապարտեզն իր սաներին ընդունել է հիմնանորոգված, կահավորված ու անհրաժեշտ ուսումնական ու աշխատանքային միջոցներով հագեցած նոր մանկապարտեզում: Մանկապարտեզի արդիականացումն իրականացվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Միջոցառման ավարտին Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի անունից շնորհակալագրեր ու պարգեւներ է հանձնել մանկապարտեզի տարեց աշխատակիցներին:

Սարուխանի թիվ 1 մանկապարտեզն այժմ գործում է երկու խմբեր հաճախող 50 սաներով:

Ալվարդ Մանուկյան

ՄԵՎԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՃԱՊՈՆԱՑԻ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՍԱԿՈՒՐԱ ՆԻՇԻՈԿԱՅԻՆ

Գեղարքունիքի մարզի Սեւանի երաժշտական դպրոցը հյուրընկալել է ճապոնացի դաշնակահար Սակուրա Նիշիոկային:

Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցում տեղի է ունեցել հայ-ճապոնական բարեկամությանը, մշակութային համագործակցությանը եւ երաժշտաարվեստին նվիրված ինքնատիպ միջոցառում, որը մի հարկի տակ է համախմբել Հայաստանի Հանրապետությունում ճապոնիայի դեսպանատան ներկայացուցիչներին եւ փոխդեսպան Յոկո Անազավային, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Զարուհի Ազնաուրյանին եւ աշխատակիցներին, Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանին, համայնքապետարանի եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներին, երաժշտասերներին, հրավիրյալներին:

Հրավիրյալների թվում է եղել նաեւ ճապոնացի դաշնակահար Սակուրա Նիշիոկային, ով ոչ միայն սիրով ընդունել էր հրավերը, այլ նաեւ հանդիսատեսին է ներկայացրել համաշխարհային դասական երաժշտության նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Դաշնակահար Սակուրա Նիշիոկայի կատարումներին նախորդել են Սեւանի երաժշտական դպրոցի սաների եւ դասատուների մասնակցությամբ երաժշտական կատարումները՝ տարբեր գործիքների նվագակցությամբ:

Մշակութային երկխոսությունը ոչ միայն կայացավ, այլ նաեւ եկավ ապացուցելու, որ երաժշտության լեզուն չի ճանաչում սահմաններ, որ այն հասկանալի է բոլորին ու կարող է բարեկամության նոր կամուրջներ հյուսել:

Երաժշտական դպրոցի դահլիճի պատերի ներսում միահյուսվեցին տարբեր մշակույթներ կրող երաժիշտների կատարումները, որի շնորհիվ համերգը դարձավ երկու ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման, միմյանց բացահայտելու լավագույն հնարավորություն՝ նոր հանդիպումների ակնկալիքով եւ համագործակցության հեռանկարներով:

Երաժշտական տոնը կայացավ հայ-ճապոնական շեշտադրումներով՝ հիանալի պահեր պարգեւելով Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցում հյուրընկալվածներին:

Արմինե Ղուկասյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 1,6 ԿՄ ՃԱՆԱՊԱՐՀ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի գերեզմանոցի տարածքում հիմնանորոգվում են 1600 գծամետր ընդհանուր երկարության ճանապարհներ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, շինաշխատանքներն ընթանում են ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Մարտունու գերեզմանոցի ճանապարհների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 105 միլիոն 600 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Մարտունու գերեզմանոցի ճանապարհների հիմնանորոգում տուֆ քարով սալարկմամբ, 1600 գծամետր երկարությամբ եւ շուրջ 9600 քմ մակերեսով:

Այս պահին ակտիվ փուլում են գտնվում ճանապարհի լայնացման եւ նախապատրաստական հողային աշխատանքները:

Նույն ծրագրի շրջանակներում ճանապարհի սալարկման աշխատանքներ կիրականացվեն նաեւ Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի գերեզմանոցում, շուրջ 100 գծամետր երկարությամբ:

Ճանապարհաշինական աշխատանքները դիտարկելու նպատակով օրերս Մարտունի քաղաքի գերեզմանոց բարձրացող ճանապարհահատվածի շինհրապարակ է այցելել Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԾԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել ազգային պարի ուսուցմանը նվիրված մեծ միջոցառում, որը նախաձեռնել եւ կազմակերպել էր Ներքին Գետաշենում գործող «Կոթ» ազգային պարի խումբը:

Միջոցառման հյուրերն են եղել «Կայք» մշակութային հանգույցի ներկայացուցիչները: Միջոցառմանը մասնակցել են Մարտունի համայնքի վեց գյուղական բնակավայրերի երեխաներ եւ երիտասարդներ:

Ծրագիրը մեկնարկել է ներածական հատվածով, որի ընթացքում անդրադարձ է կատարվել ազգային մշակույթի, հայկական պարի եւ ազգային ինքնության պահպանման կարեւորությանը: Այնուհետ երեխաների ակտիվ մասնակցությամբ տեղում հորինվել են երգեր, ներկայացվել ստեղծագործական փոքրիկ կատարումներ:

Միջոցառման երկրորդ մասը շարունակվել է մշակույթի կենտրոնի բացօթյա հրապարակում, որտեղ անցկացվել է հայկական ազգային պարերի ուսուցում: Մասնակիցները սովորել են հայկական ազգային պարեր:

Նման նախաձեռնությունները կարեւոր դեր ունեն ազգային արժեքների պահպանման, համայնքային կյանքի ակտիվացման եւ երիտասարդների համախմբման գործում: միջոցառումն անցել է բավականին հագեցած օրակարգով:

Հայկ Հովհաննիսյան

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ ՄԱՅՐՈՒՂԻՑ ՋՈՐԱԳՅՈՒՂ ՄՏՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով միջին նորոգման է ենթարկվել Սեւան-Մարտունի մայրուղուց Մարտունի համայնքի Ջորագյուղ բնակավայր մտնող ճանապարհը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 107 միլիոն 700 հազար դրամ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի օգոստոսի 16-ից եւ օգոստոսի 28-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում:

Ծրագրի իրականացման արդյունքում Սեւան-Մարտունի մայրուղուց Ջորագյուղ մտնող ճանապարհը միջին նորոգման է ենթարկվել 3 կիլոմետր երկարությամբ եւ 18300 քառակուսի մետր մակերեսով

Շինաշխատանքների ավարտից հետո կիրականացվեն նաեւ ճանապարհի կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

Խոսրով Խլղաթյան

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՎՈՒՄ Է ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Բարեկամություն փողոցում ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են ասֆալտապատման ու բարեկարգման աշխատանքները:

Բարեկամություն փողոցի ասֆալտապատման եւ բարեկարգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 66 միլիոն 592 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Բարեկամություն փողոցի երթեւեկելի մասի եւ երկողմանի մայթերի ասֆալտապատում՝ 220 գծամետր երկարությամբ:

Շինարարականական աշխատանքները կավարտվեն առաջիկա շաբաթների ընթացքում:

Հիշյալ փողոցում տասնամյակներ շարունակ ասֆալտապատում եւ բարեկարգման աշխատանքներ չէին իրականացվել, եւ համայնքային առաջնահերթություն էր հիշյալ խնդրի լուծումը: Շինաշխատանքների կապալառու կազմակերպությունը «Ճան Շին» ՍՊԸ-ն է: Շինարարական աշխատանքների ավարտի ըդյունքում եւս մեկ փողոց կդառնա ներկայանալի, համրարավետ ու անվտանգ լրացնելով Սեւան քաղաքի ասֆալտապատ փողոցների շարքը:

Արմինե Ղուկասյան

18.qxd 13/09/2026 15:07 Page 7

ՍՈՒՍԱՆՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ. ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԴԵՄՔԵՐԻՑ ԱՆԿԸ

Սուսաննա Ղազարյանն արդի հայ գրականության ճանաչված դեմքերից է, ով արդեն հասցրել է ընթերցողի սեղանին դնել բանաստեղծական վեց գիրք:

Նա ծնվել է 1984 թվականին, Արմավիրում: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է ԵՊՄՀ բանասիրության ֆակուլտետում, հետո եղել է հայցորդ՝ նույն բուհում:

Գրական փորձեր արել է դեռեւս 13 տարեկանից: Առաջին անգամ նրա երկու պատմվածքները 2008 թվականին տպագրվել են «Նոր-Դար» հանդեսում: 2009 թվականին տպագրել է առաջին գիրքը՝ «Վերադարձ դեպի արեւը» վերնագրով: Երկրորդ գիրքը տպագրվել է 2015 թվականին՝ «Վաղը կգա...» վերնագրով: Երրորդ գիրքը՝ «Թռիչք»-ը, հրատարակվել է 2019 թվականին: Չորրորդ գիրքը՝ «Սե՛ր իմ, Հայրենիք»-ը՝ ընթերցողի սեղանին է դրվել 2021 թվականին: Հինգերորդ գիրքը տպագրվել է 2024 թվականին, իսկ վեցերորդը՝ «Ամբողջացրու ինձ...», 2025 թվականին:

Սուսաննա Ղազարյանը եղել է «Գրական կյանք» թերթի խմբագիրը, «Նոր-Դար»-ի վերստուգող խմբագիր, իսկ հիմա «Հայրենիքի ձայն» թերթի խմբագիրն է: Խմբագրել է մի շարք գրքեր:

«Պարույր Սեւակի», «Ալիսիա Կիրակոսյանի» անվան, «Գրականության եւ արվեստի» եւ մի շարք այլ գրական մրցանակների դափնեկիր է, «Հովհաննես Թումանյան» միավորման Ոսկե մեդալակիր:

Սուսաննա Ղազարյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում հնչեղ քնարականությամբ, բանաստեղծական ուրույն ձեռագրով, Հին ու Նոր Հայաստանի, արարչագործ հայ մարդու կերպարի որոնմամբ ու փառաբանմամբ: Նրա կերտած գրականությունից ճառագում է հզոր հայրենասիրություն, անապական ազնվություն ու մարդասիրություն, հույսով ու հավատով լեցուն կենսասիրություն:

Սուսաննա Ղազարյանը «Գեղամա աշխարհ» թերթի ընթերցողներին ներկայանում է առաջին անգամ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ուրցի բույր ունի երկիրս
Եվ համ ունի մեղրահացի,
Քարե մագաղաթ է գիրը,
Քարի տակ հոգոց է լացի:

Սարե բերդ է իմ երկիրը,
Լեռան ծանրությունը ունի,
Ուր գոչում են ժայռն ու վիհը,
Չայնակցում է չուն թռչունի:

Գութանի երգ ունի շուրթին,
Կրակի բոց՝ ծաղկած թոնրում,
Ամեն տան երդիկ-կտուրից
Օխանի ծուխն է ելանում:

Ամեն շեն իր հոգսը ունի,
Պանդուխտը կանչ ունի արյան,
Երբ դիպչում է շողն արեւի
Սրբազան հողին Նաիրյան:

ՉԱՐԵՆՑՅԱՆ

Իմ բառերը դաշույնի պես պիտի փայլեն,
Սրալեզու թրի նման կտրեն պիտի,
Ես չեմ եկել անկյուններում կո՛ւչ գամ, լռե՛մ,
Թող իմ բառը ճշմարտության հուրը լինի...

Իմ բառերը բալասան ու բո՛ց պիտ լինեն,
Փլատակեն տաճարները անարգ ստի,
Ճշմարտության ապարանքներ պիտ կառուցեն,
Հոգիներին բաշխեն լույսը երանելի:

Խենթ բառերս պիտի հնչեն ամեն բեմից,
Կուլիսներում թող պահ մտնեն առնետները,
Չեմ վախենում ես մահացու կախաղանից,
Թող հավերժի իմ Չարենցյան խիզախ գենը:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Տանիքների վրա մայրամուտը կարմիր
Իր վերջին աղոթքն է հուսահատ մրմնջում,
Դու քո այգալույսի շեկ նժույգը հեծի՛ր,
Լսի՛ր, թե ինչպես է նա աշխույժ վրնջում:

Գնա անխախտ կամքով դեպի արեւն անմեռ՝
Լքած ունայնության մահիճը մշուշոտ,
Գնա այնտեղ, որտեղ եղել է ցուրտ ձմեռ,
Եվ դաշտերը, ավա՛ղ, ներկվել են արյունով:

Համառորեն անցիր սահմանը նենգ վախի,
Մատնահարի՛ր՝ երկնի աստղերը թող վառվեն,
Քո խիզախ նժույգին էլ ոչ ոք չի հաղթի,
Բա՛ց թող երազներդ, թող կապույտում ճախրեն...

ՀՐԵՇՏԱԿԻՑ ՄԱՔՈՒՐ

Աստղափոշի՛ ցանիր Հարդագողի ճամփին,
Խորտակված երազով կնոջ սիրտը ե՞տ առ,
Նա տվել է քամուն, բաշխել է աստղերին,
Մնացել է մենակ, եւ հոգին է տկար:

Խի՛նդ բեր պաղ օրերում՝ անարեւ ու մռայլ,
Որ մթին է այնպես, ասես չի՛ լուսացել,
Լուսնի մռթից կախվել ու ոռնում է մի գայլ.
Այդ մենավոր կինը երբեք չի՛ հարսնացել:

Ճերմակ անուրջնե՛ր բեր, ճերմակ-ճերմակ շորե՛ր,
Թող շղարշե մարմնին իջնի ծյունը տաքուկ,
Գրկի՛ր նրան այնպես, ասես բաց չես թողել,
Ու թող զգա իրեն հրեշտակից մաքուր:

ՀԱՅԱՑՈՒՄ

Գառնու տաճարից մեր հուրը վառենք
Եվ Մայր Արաքսից խմենք մի ումպ ջուր,
Մեր Արարատից մի բուռ հող առնենք՝
Խառնելով իրար կարոտ ու անուրջ...

Ծիրանի ոսկե պտուղը քաղենք,
Դաշտերից բերենք ուրցի անուշ բույր,
Կապույտ Սեւանի սեգ վանքում ծնկենք
Եվ խառնենք իրար աղոթք ու մրմունջ...

Լուսավորչի հին կանթեղը պահենք,
Նարեկացու հետ խնդրենք թողություն,
Քուչակի սրտից Հայրեններ հանենք՝
Խառնելով իրար սեր ու հոգնություն:

Հովիվը հանդարտ փչի իր շվին,
Ժամհարն օրհնության զանգը հնչեցնի,
Շարականների շշուկը դեղին՝
Գա, խառնվի մեր ՈԳՈՒՆ ՀԱՅԵՑԻ...

ՆՈՒՅՆ ԵՐԱԶՈՎ...

Իջեք, իջեք, երազներ,
իջեք զգո՛ւյշ, երազներ,
շոյող, անո՛ւշ, երազներ,
իջեք քնքո՛ւշ երազներ...
Լեւոն Շանթ

Անձրեւից առաջ հագի՛ր բաց կապույտ բաճկոնակը քո,
Եկ նստենք խաղաղ աստղերից փայլող լճակի ափին...
Լսենք՝ ինչպե՞ս է գիշերահավքը երգում անվրդով
Եվ մտաբերենք ջրերում ապրող աստվածներին հին:

Պատմի՛ր, ինչպե՞ս էր աղջկան հպված՝ դողում աբեղան,
Ինչպե՞ս էր սիրո աղոթք շշնջում վանականը ծեր,
Նրանք արգելված, բայց քաղցր սիրո զոհերը եղան,
Որ մենք փայտ դնենք սիրո կրակին՝ մշտաբորբ ու ջերմ:

Որ էլ սրտերը այդքան հեշտորեն չկորցնեն իրար,
Որ ականջ դնեն հին աստվածների զրույցին անխոնջ,
Իմանան՝ ինչպես աբեղան սիրո երազը գտավ,
Եվ ինչպես ենք մենք հիմա էլ ապրում այդ նույն երազով...

ԻՆՁ ԱՍՈ՞ՒՄ ԵՆ...

Ե՞ս, որ երազում եմ ծով ու երկինք կապույտ,
Իմ թեւերի վրա արեւն եմ պահում վառ,
Ինձ ասում են՝ փակվի՛ր հին Ագռավաքարում,
Այրի՛ր երազներդ, տո՛ւր քամուն խելագար...

Ե՞ս, որ թռչնի թեւով սավառնում եմ անվերջ,
Հասնում էրզրում ու Վան, Գանձասար ու Բերձոր,
Ինձ ասու՞մ են՝ կտրի՛ր թեւերդ սնամեջ
Եվ օրերդ քա՛րշ տուր վանդակում ցանցավոր:

Ե՞ս, որ ժայռ եմ ամուր, ապառաժ եմ քարե,
Ինձ ասո՞ւմ են՝ կա՛վ ես, կփշրվե՞ս մի օր,
Ականջ չե՞մ դնելու ձայներին կապարե,
Ես ՀԱՅԿԱՆ ՄԵՇ տոհմի դիցուհին եմ հզոր:

ՏԱ՛Ր ԻՆՁ...

Տա՛ր ինձ կիսավեր տաճարները մեր,
Սիրո աղոթքներ թո՛ղ որ մրմնջամ,
Թող հոգիս թեւի արեւից էլ վեր,
Հրեշտակի հետ, որ նստեմ սեղան:

Որ աղ ու հացը լինի օրհնված,
Ցուրտը նահանջի մեր հոգիներից,
Խոսենք օրերից անցած-գնացած,
Մի քիչ համ առնենք Աստծո նշխարքից:

Քեզ հետ կշրջեմ ես ոտաբոբիկ.
Իմ ուխտավորի ցուպն ամուր գրկած,
Սիրո աղոթքը թող հասնի երկինք,
Որ սե՛րը, սե՛րը համարենք փրկված...

ՈՒ ԱՆԷԱՆԱՄ...

Գնամ դաշտերից կարոտս փնջեմ, դրասանգ կապեմ,
Ծանոթ առվի մոտ թինկ տամ հոգնաբեկ հնձվորի նման,
Իրիկվա հովի բերած բույրերից մի փոքր արբեմ
Ու մոռացության մշուշների մեջ լուռ անէանամ...

Խաղաղվեմ, ինչպես ալիքվող ծովը ալ մայրամուտին,
Զգամ՝ ինչպես են կաթիլներ հորդում լուսաշիթերից,
Աչքերս գոցեմ, լողամ անձրեւի ոսկե ջրերում
Ու անէանամ՝ մենավոր երգս թողած անհունին:

Անհունից գուցե մեկը իմ երգին ձայնակից լինի,
Երգս տարածվի արծաթ դաշտերի, ջրերի վրա,
Կարոտից հյուսած իմ դրասանգը ծաղկունքով հինի,
Ու անէանամ՝ ծաղկաբույր օրվա թեւերի վրա:

ԱՅՈ՞, Ա՞ՅՍ Է ՆԱԻՐԻՆ

Նույն թռչունն է երգում՝ գարունը շուրթերին...
Ու զանգերն են հնչում՝ հին ու կարմիր վանքի,
Ես ինձ հարց եմ տալիս՝ այս չէ՞ արդյոք Նաիրին՝
Բազմած լեռների մեջ ու ձորերում վայրի:

Ո՞չ, դու բնավ միֆ չես եւ ո՞չ էլ ցնորք ես...
Դու կա՛ս, դու ապրո՛ւմ ես, սի՛րտդ է տրոփում,
Կրծքիդ խորին խորքում մի հինավուրց վերք է,
Որ բացվում է հաճախ եւ արյուն է հոսում:

Դու կա՛ս, դու ապրո՛ւմ ես՝ հոգիներում պայծառ,
Որ հավատի թուրմ են խմում ամեն գիշեր:
Բարձրանո՛ւմ են, ելնո՛ւմ ճամփաներդ անծայր՝
Տանելով Դադիվանք, Ամարաս ու Քիրս լեռ:

Դու կա՛ս, դու ապրո՛ւմ ես երակներում ցեղի,
Ո՞չ, դու ոչ ցնորք ես եւ ո՞չ էլ միֆ բնավ,
Ճամփաներդ փոշոտ տանելու են էլի՝
Դեպի Սիս ու Անի, դեպի Բիթլիս ու Վան:

Նույն թռչունն է երգում՝ գարունը շուրթերին,
Նույն զանգերն են հնչում՝ հին ու մամռած վանքի,
Ես ասում եմ՝ ահա՛, այո՛, ա՛յս է Նաիրին՝
Բազմած լեռների մեջ ու ձորերում վայրի:

ԹՈՂ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԼԻՆԵՄ...

Թող քեզ համար լինեմ կինը անապատի,
Ում մաշկն ավազաբույր արեւայրուք ունի,
Թափառական քամին թող ինձ իր հետ տանի՝
Դեղին անդարձություն, որ վերադարձ չունի:
Քամուց փախչող շորս՝ ճերմակ ու թափանցիկ,
Թող պիրկ կուրծքս բացի՝ շեկ արեւին հմա,
Գուցե նաեւ այդժամ հենց դու գաս ինձ այցի,
Ու մատներիդ դողը կրծքիս հեւքով զգամ...
Թող որ լինեմ կինը անհայտ անապատի
Եվ իմ հմայքներով քեզ անվերջ կախարդեմ,
Ուր ոչ ոք այլեւս մեզ էլ չի գա այցի,
Եվ էլ չի կեղեքի ժամանակը անդեմ:
Թող քեզ համար լինեմ կինը անապատի..

ՔԵԶՆՈՎ ԵՄ ԱՊՐՈՒՄ...

Երկար նավեցի ծովում ալեկոծ,
Կտրեցի, անցա անապատը բարկ,
Բայց իմ լեռներն են հոգուս անչափ մոտ
Եվ իմ գետերը՝ կայտառ ու զվարթ...
Լսեցի թռչնի դայլայլ անսովոր,
Օտար քամիներ կուրծքս շոյեցին,
Բայց իմ սոխակի երգն է ամոքող
Եվ իմ ծառերի շրշյունը մեղմիկ:
Գուցե տրոփեց սիրտս ինչ-որ տեղ,
Գուցե խլրտաց ներսումս մի բան...
Բայց քո գրկում եմ անհաղթ ու զորեղ,
Քեզնով եմ ապրում, Հայաստա՛ն աշխարհ:

Սուսաննա Ղազարյան

18.qxd 13/09/2026 15:07 Page 8

ՊԱՊԻՍ ՀԱՄԲՈՒՅՐԸ



Ի՞նչ ուներ պապս կյանքում իր շվար՝
Մի փոքրիկ բոստան, մի հյուղ հողաշեն,
Երդիկի ներքո՝ կավաշեն թոնիր,
Որից աթարի բոցն էր միշտ ելնում,
Ծխալով գնում հեռու եթերներ...
Տանը ուղիղ կից մի անասնագոմ՝
Մեջը հավուճիվ, տավար ու ոչխար...
Գոմի անկյունում՝ բահն ու գերանդին,
Փոցխ ու մանգաղը, եղանը երկար,
Խոտի խուրձ՝ քաշող սուր, կեռ բանոքին,
Խրձի ջով մանող կեմարը կեռծայր,
Թիակը, որով ձյուն էին մաքրում
Հողե տանիքից, տան ճամփից անդուր,
Կամ փայեն, թրիք բեռնում սայլակին,
Դուրս կրում գոմից՝ պասմա թափելու...

Հողե հատակով ամբողջ տան ներսում
Կար ալյուրի ու ցորենի ամբար,
Փայտյա հինգը թախտ՝ վրան էլ քեչան,
Թոնրի կողքերին՝ հնամաշ խսիր,
Մի քանի աթոռ, կարմրաներկ սեղան,
Կավե, պղնձե կանթով ամաններ,
Թոնիրը ծածկող հնաշեն քուրսին,
Բրդյա տեղաշոր, բմբուլե բարձեր՝
Կիտված թախտերին, մահճակալներին...
Լավաշ թխելու գրտնակ էլ ուներ
Եվ՝ լայն ռափադա, սերզտիչ ձեռքի,
Ուռի շիվերից գործված սալաներ,
Պես-պես կողովներ՝ շարված մառանում...
Մարտից տուն բերած մի փամփշտակալ,
Որ մի առանձին սիրով էր պահում:
Հապա երկանքը, որ զօրուգիշեր
Օջախի համար ձավար էր աղում...

Իսկ ի՞նչ կար դրսում՝ մեր տան շուրջբոլոր.
Ցանի ամրոցը՝ կպած հաստ պատին,
Եվ խոտի դեզը՝ կլոր ու բարձր:
Բոստանի լանքով, երկայնքով կանգուն
Մի ծառաստան էր պտղում սիրավառ՝
Սնել-պահելով մի ողջ գերդաստան,
Մեզ պարգեւելով տանձ, խնձոր, սալոր:

Իր հարկի ներքո քսան շունչ ուներ,
Ճիշտ այդքան ուտել ցանկացող բերան՝
Իմ բազմաչարչար պապը ալեհեր՝
Ողջ կյանքը ապրած հոտաղ-շինական:
Յոթ գոմշի ուժի բանող ձեռք ուներ,
Անդուլ ճգնելու խենթ համառություն,
Գիշեր ու ցերեկ նա հանգիստ չուներ՝
Հոգին նվիրած թափին արարման:
Տառապանքի մեջ՝ անվերջ, անդադար,
Չար ու չարքով լի, հոգսաշատ կյանքում
Անսահմանորեն բարի սիրտ ուներ,
Ցասման մեջ անգամ՝ կայտառ խնդություն:

Բանում էր, մինչեւ խավարը իջներ
Հանդին, բոստանին, հող ու երկնքին,
Իսկ հետո օրվա հեքիաթը պատմեր
Ժիր ու ժպտերես, սիրուն թոռներին:
Նա շունչ էր տալիս հողիս տառապյալ,
Աշխարհի հոգսն էր առել ուսերին,
Ու մերկ ձեռքերով, հոգով նվիրյալ
Իր նոր հայրենի աշխարհն էր կերտում...
Եվ երբ իր վերջին շնչին էր հասել,
Գամվել նենգ մահվան կլանող մահճին,
Կամեցավ ձյունոտ լեռները չափել,
Հողը հայրենի դնել իր սրտին:
Ջմռան պաղ ու ցուրտ, արեւ ցերեկ էր...
Հոգեվարքի մեջ պապիս դուրս տարան:
Հայացքը հառեց անհուն հեռուներ՝
Պայծառ երկնքին, լեռնաստաններին:
Նայեց կարոտով, բաղձանքով հզոր,
Ջեռքով՝ հասկացրեց՝ իրեն ներս տանեն...
Ապա հեղվեցին ողբի արցունքներ՝
Հանգել էր պապս մերոնց ձեռքերին:

Ու մինչեւ հիմա, կես դարից ավել,
Պապիս սիրով եմ աշխարհն իմ գրկում,
Ջգտում խավարում կանթեղներ վառել,
Խնկարկել նրա հիշատակն անգին...
Որ աղքատության կարիքներում կույր
Առասպելական մի ուժ էր գտնում
Որդեսերության, կամքի բարեբեր
Եվ՝ լուսահեղեղ կյանքի արարման...
Որ այս կյանքի մեջ պապս ինձ ուներ
Եվ շատ հաճախ էր սեղմում իր կրծքին,
Որ իր համբույրը սրտիս է դաջվել,
Ջուլվել գալիքի արշալույսներին:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԻՆԵՐՆ ՈՒ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԸ ՀԱՄԱԼՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ԽԱՂԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի այգիներն ու խաղահրապարակները համալրվում են նոր խաղամիջոցներով:

Խաղամիջոցների տրամադրումն իրողություն է դարձել Սեւան համայնքի եւ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի համագործակցության արդյունքում՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում՝ GIZ-ի կողմից, Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության պատվիրակմամբ եւ Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության համաֆինանսավորմամբ:

Նալբանդյան փողոցի 12, 24, 26 շենքերի բակում, Շինարարներ փողոցի 3, 5 շենքերի հյուսիսային հատվածում, Աբովյան փողոցի 5, 7, 9, 11, 13, 15 շենքերը միավորող բակային տարածքում, Իտալիայի, Պրահա-Վինոր այգիներում արդեն մեկնարկել են խաղամիջոցների տեղադրման աշխատանքները:

Այժմ հիշյալ տարածքների բարեկարգման եւ հիմնանորոգման աշխատանքները գտնվում են նախապատրաստական փուլում. շինարարական աշխատանքները կատարվելու են համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով:

Նշենք, որ Պրահա-Վինոր այգում արդեն իսկ մեկնարկել են շինարարական աշխատանքները՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության եւ համայնքի ֆինանսավորմամբ:

Նպատակասլաց եւ հետեւողական աշխատանքի արդյունքում շուտով համայնքապահպան եւս մեկ ծրագիր կդառնա իրողություն, որի արդյունքում սեւանցիները կստանան ժամանցի ու հանգստի ներկայանալի եւ բարեկարգ տարածքներ՝ կահավորված եւ երկրորդ շնչառություն ստացած:

Միաժամանակ տեղեկացնենք, որ խաղամիջոցներից լիարժեք հնարավոր է օգտվել տարածքների բարեկարգումից հետո:

Արմինե Ղուկասյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի դաստիարակի (1 դրույք) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձեւ 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձեւ 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ 2026թ. հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. հոկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում (հասցե՝ ք. Գավառ, Արծրունի եղբայրների 53):

Տեղեկությունների համար զանգահարել 093813418 հեռախոսահամարով:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ԳԱՎԱՌԻ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՆԻՔԸ

Արդեն ավարտվել են Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ուսուցողական կենտրոնի տանիքի հիմնանորոգման աշխատանքները:

Շինաշխատանքներն իրականացվել են Գավառ համայնքի բյուջեի միջոցներով:

Հին տանիքն ամբողջությամբ քայքայվել էր, ինչի հետեւանքով կենտրոնի դասասենյակների առաստաղները զգալիորեն արդեն վնասվել էին: Կենտրոնի տնօրինության կողմից խնդիրը ներկայացվել է համայնքապետարան, եւ Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի հանձնարարականով ձեռնարկվել են տանիքի հիմնանորոգման աշխատանքները: Կատարվել են է հին տանիքի փայտանյութի եւ ջրհորդաների քանդում, իրականացվել են տանիքի ջերմամեկուսիչ շերտի իրականացում, փայտյա կարկասի կառուցում, նոր թիթեղների եւ արեւային վահանակների տեղադրում: Գավառի ուսուցողական կենտրոնի տանիքի հիմնանորոգման եւ արեւային ֆոտովոլտային կայանի վահանակների տեղադրման նպատակով հատկացվել է 27 միլիոն 984 հազար դրամ:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՄԱ ԱՇԽԱՐՀ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 10. 09. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: